ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ-17/4-Տ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 8 սեպտեմբերի 2017թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Օհանջանյանը, Ա. Սիմոնյանը, Մ. Կարապետյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ-17/4-Տ>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության քննարկման արդյունքները:

2. Գնահատման արդյունքների ամփոփման վերաբերյալ

- Մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 04.09.2017թ.:
- 06.09.2017թ. ստացվել է համապատասխան եզրակացությունը /համապատասխանում է սահմանված չափանիշներին/:
- Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի և գնահատման թերթիկների ադյունքների հիման վրա.

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ-17/4-Տ» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած Մասնակից՝ <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Գնահատող հանձնաժողովի՝		
Նախագահ		Ա. Բալայան
անդամներ		Վ. Օհանջանյան
		Ա. Սիմոնյան
		Մ. Կարապետյան
		Հ. Սիրունյան
Քարտուղար		Ա. Սարգսյան